

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՍԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿԻՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՕՐԻՆԱԿ 1

«ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ ՊԱԼԱՏԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ի  
ՀԻՍՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ


« 23 » 01 2019թ.

ԳՐԱՆՑՄԱՆ N 211.171.1054859

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱԵՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

02551618

ՆԱԽԱԳԱՀ՝



ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

« 23 » 01 2019թ.



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևան 2018թ.

PRINTED IN TOTAL \_\_\_\_ COPIES

APPROVED

COPY \_\_\_\_

BY THE GENERAL MEETING OF THE  
“AMERICAN CHAMBER OF COMMERCE IN  
ARMENIA” PUBLIC ORGANIZATION

REGISTERED BY THE STATE REGISTER AGENCY OF  
LEGAL ENTITIES OF THE REPUBLIC OF ARMENIA

ON 16TH OF NOVEMBER 2018

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 201

President`

REGISTRATION NUMBER \_\_\_\_\_

\_\_\_\_\_ ARA HOVSEPYAN

TAXPAYER IDENTIFICATION NUMBER

\_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 201

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

**CHARTER**

OF

THE AMERICAN CHAMBER OF COMMERCE IN ARMENIA PUBLIC  
ORGANIZATION

Yerevan, 2018

## I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ «Պալատ») Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ և որը հանդիսանում է «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության (գրանցված 25.02.2000թ., գրանցման համարը՝ 286.150.03834, ՀՎՀՀ՝ 02551618) գույքի և պարտավորությունների իրավահաջորդը:
2. Պալատը գործում է համաձայն սույն Կանոնադրության (այսուհետև՝ «Կանոնադրություն») և ՀՀ օրենսդրության:
3. Պալատի գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:
4. Պալատի անվանումն է՝ «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն, իսկ կրճատ՝ «ՀԱԱՊ» ՀԿ: Պալատի անվանումը անգլերեն՝ “American Chamber of Commerce in Armenia” Public Organization, իսկ կրճատ՝ “AmCham” PO:
5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, 0010, Ամիրյան փողոց շենք 1, հեռախոս՝ +374 (10) 599 902, էլ. հասցե՝ info@amcham.am:
6. Պալատը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
7. Պալատը կարող է հիմնադրել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

## I GENERAL PROVISIONS

1. “The American Chamber of Commerce in Armenia” public organization (hereinafter referred to as “the Chamber”) is a public organization of legal entities of the Republic of Armenia and foreign states, having a status of non-commercial organization and is the legal successor of the “American Chamber of Commerce” Union of Legal Entities (established on the 25th of January 2000, registration number 286.150.03834, taxpayer identification number 02551618) as a result of its restructuring.
2. The Chamber shall operate in accordance with this Charter (hereinafter referred to as “the Charter”) and in a manner prescribed by the legislation of the Republic of Armenia.
3. The principles of the Chamber's activities are lawfulness, exclusion of discrimination, integrity, voluntary Membership, common interests of its Members, self-governance and accountability.
4. The Chamber's name is "American Chamber of Commerce in Armenia" Public Organization, in short "AmCham" PO. The Chamber's name in Armenian is «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն, in short «ՀԱԱՊ» ՀԿ.
5. The address of the Organization is: 1 Amiryan Street, 0010 Yerevan, RA; phone number: +374 (10) 599 902, e-mail address: info@amcham.am.
6. The Chamber shall operate throughout the territory of the Republic of Armenia and in foreign countries in accordance with the laws of such

8. Պալատն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:
9. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Պալատը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

## **II ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

10. Պալատի գործունեության առարկան ամերիկյան գործարարությունն ու գործարար շահերի զարգացումը խթանելն է Հայաստանի Հանրապետությունում:
11. Պալատի գործունեության նպատակներն են՝
  - 1) նպաստել Հայաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) միջև բոլոր տեսակի փոխշահավետ գործարար կապերի հաստատմանը,
  - 2) ներկայացնել իր անդամների ընդհանուր տնտեսական շահերը և օժանդակել դրանց,
  - 3) նպաստել Հայաստանում առևտրի ու ներդրումների համար նպաստավոր մթնոլորտի զարգացմանը,
  - 4) նպաստել Հայաստան-ԱՄՆ գործարար կապերին վերաբերող տնտեսական հարցերի արդյունավետ լուծմանը,
  - 5) աջակցել Հայաստանում գործող ամերիկյան գործարարությանն ու ամերիկացի գործարարներին, ինչպես նաև օգնել ԱՄՆ-ում

states.

7. The Chamber may establish branches and representative offices.
8. The Chamber is entitled to carry out entrepreneurial activities in accordance with the objectives laid down in its Charter, dispose its assets and outcomes of its activities for such objectives, as well as to establish a commercial organization or to become a Member therein in the manner prescribed by law.
9. To implement its goals and objectives the Chamber shall cooperate with state governance and local self-governing bodies, international and foreign organizations and other organizations registered in the Republic of Armenia.

## **II THE SCOPE AND OBJECTIVES OF THE CHAMBER'S ACTIVITIES**

10. The scope of the Chamber's activities is to promote American business and development of business interests in the Republic of Armenia.
11. The objectives of the Chamber's activities are to:
  - (1) promote mutually beneficial relations between Armenia and the United States of America (USA) with regards to all types of business activities;
  - (2) represent and promote the common economic interests of its Members;
  - (3) contribute to the development of an attractive trade and investment climate in Armenia;
  - (4) contribute to the effective settlement of economic issues relating to Armenian-USA business relationships;

գործող հայ գործարարությանն ու հայ գործարարներին,

- 6) կապեր հաստատել Ամերիկայի առևտրի պալատի և ԱՄՆ-ում կամ այլուր գործող առևտրի պալատների կամ միությունների հետ,
- 7) ծավալել այլ օրինական գործողություններ՝ սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար:

### III ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

12. Պալատն իր նպատակներն իրագործելիս իրականացնում է հետևյալ գործունեությունը.

- 1) Հայաստանում գործարարության զարգացման և աջակցման հետ կապված հարցերում համագործակցում է Ամերիկայի և Հայաստանի կառավարական մարմինների ու պաշտոնյաների, ինչպես նաև գործարար համայնքի հետ,
- 2) կապեր է հաստատում Հայաստանի և ԱՄՆ-ի ձեռնարկությունների և անհատների միջև,
- 3) հավաքում, ստեղծում և տարածում է Պալատի նպատակներն իրագործելուն օժանդակող տեղեկատվություն, փորձ և փորձառություն,
- 4) կազմակերպում ու անցկացնում է Պալատի նպատակներն իրագործելուն օժանդակող սեմինարներ և այլն,
- 5) հիմնում ու վարում է գրադարան, որտեղ կլինեն ԱՄՆ-Հայաստան գործարար տնտեսական հարցերին վերաբերող արդի փաստաթղթերը,
- 6) հրատարակում է պարբերականներ ու տեղեկատու գրականություն՝ Հայաստան-ԱՄՆ գործարար կապերի մասին,
- 7) իրականացնում է այլ գործունեություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և սահմաններում՝ նպատակաուղղված Պալատի և վերջինիս անդամների խնդիրների լուծմանը:

(5) assist American businesses and American businessmen, as well as Armenian businesses and Armenian businessmen who operate in the USA;

(6) establish relationships with the US Chamber of Commerce and other Chambers of Commerce or associations located in the USA or elsewhere; and

(7) undertake all other lawful actions to attain the objectives set forth in this Charter.

### III ACTIVITIES OF THE CHAMBER

12. When fulfilling its objectives, the Chamber shall carry out the following activities:

(1) cooperate with American and Armenian government bodies and officials and business community in issues relating to business development and support in Armenia;

(2) establish contacts between Armenian and American enterprises and individuals;

(3) collect, create, and disseminate information, expertise and practice that will assist the Chamber to accomplish its purpose;

(4) organize and host seminars and other functions that will assist the Chamber to accomplish its purpose;

(5) develop and maintain a library with up-to-date documentation on commercial matters of USA-Armenian business interest;

(6) publish periodicals and reference materials on Armenian-USA business relations;

(7) carry out other activities in a procedure and within the scope of

**IV ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՍ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ  
ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

13. Պալատի անդամ կարող է դառնալ ցանկացած իրավաբանական անձ, ով ընդունում է Պալատի կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, ինչպես նաև համապատասխանում է ստորև պահանջներից որևէ մեկին.

- 1) իր մասնակիցների կամ բաժնետերերի կազմում ունի ամերիկյան ներդրող,
- 2) ունի գործարար շահեր ԱՄՆ-ում,
- 3) իր կառավարման մարմիններում կան ԱՄՆ քաղաքացիներ,
- 4) ներգրավված է ԱՄՆ շուկայում ապրանքներ մատակարարելու և/կամ ծառայություններ մատուցելու մեջ,
- 5) ներկայացնում է ամերիկյան ներդրումներ Հայաստանի Հանրապետությունում:

14. Պալատի անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Գործադիր Տնօրենին: Գրավոր դիմումի ձևը և կից փաստաթղթերը հաստատվում են Պալատի Տնօրենների Խորհրդի կողմից՝ Գործադիր Տնօրենի ներկայացմամբ:

15. Պալատի անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Պալատի Տնօրենների Խորհուրդը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

16. Պալատի անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Պալատից: Մույն կետով սահմանված կարգով Պալատի անդամությունից հեռացումը կատարվում է Գործադիր Տնօրենի որոշմամբ՝ անդամի դիմումի հիման վրա:

17. Պալատի անդամը կարող է հեռացվել Պալատից Տնօրենների Խորհրդի որոշմամբ, որը պետք է ընդունվի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե տվյալ անդամը.

the legislation of the Republic of Armenia aimed at the settlement of issues of the Chamber and its Members.

**IV . PROCEDURE FOR BECOMING A MEMBER  
AND TERMINATING MEMBERSHIP OF THE  
CHAMBER**

13. Any legal entity may become a Member of the Chamber who acknowledges the objectives set forth in the Charter of the Chamber and wishes to participate in its activities, as well as meets one of the below mentioned requirements:

- (1) its Members or shareholders include an American investor;
- (2) has business interests in the USA;
- (3) its management bodies include US citizens;
- (4) is involved in supplying goods and/or delivering services to the US market;
- (5) presents American investments in the Republic of Armenia.

14. A person wishing to become a Member of the Chamber shall apply in writing to the Executive Body of the Organization - the Executive Director. Written application form and accompanying documents shall be approved by the Board of Directors of the Chamber upon the presentation by the Executive Director.

15. The issue of Membership to the Chamber is resolved by the Chamber's Board of Directors with a simple majority of votes.

16. The Chamber's Member is free to terminate its Membership any time. The termination of the Membership in the manner prescribed herein shall be done by the decision of the Executive Director based on the Member's application.

- 1) ավելի քան երկու անգամ չի կատարում անդամավճարի վճարման իր պարտավորությունը կամ
- 2) անդամը դադարում է համապատասխանել Պալատի անդամ լինելու՝ սույն Կանոնադրության պահանջներին կամ
- 3) անդամի գործունեությունը վնասում է Պալատի գործունեությանը կամ հակասում է Պալատի նպատակներին:

18. Պալատի անդամ լինելու համար սահմանվում է անդամավճար: Անդամավճարի չափը և վճարման կարգը սահմանվում է Պալատի Տնօրենների Խորհրդի կողմից:

19. Պալատի աշխատանքներին կարող են մասնակցել նաև թղթակից անդամներ, որոնք չեն հանդիսանում Պալատի լիիրավ անդամ, չունեն քվեարկության իրավունք, սակայն կարող են մասնակցել Պալատի կողմից իրականացվող գործունեությանն ու ծրագրերին: Պալատի թղթակից անդամ կարող է հանդիսանալ ցանկացած իրավաբանական անձ, եթե վերջինս կիսում է Պալատի և սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակները:

17. The Chamber’s Member may be dismissed by the decision of the Board of Directors, which shall be taken by the simple majority of votes, if the Member:
  - (1) fails to pay the Membership fee more than twice, or
  - (2) no more complies with the requirements of being a Chamber’s Member set forth in this Charter, or
  - (3) Member's activity is to the detriment of the Chamber's activity or is contrary to the Chamber's objectives.

18. Membership fee is defined for being a Member of the Chamber. The amount of Membership fee and payment procedure shall be determined by the Board of Directors of the Chamber.

19. Associate Members may also participate in Chamber's works and all the activities and projects organized by the Chamber, even if they are not Chamber's full Members (hereinafter referred to as Member) and do not have voting rights. An Associate Member of the Chamber may be any legal entity if the latter shares the objectives of the Chamber and this Charter.

**V ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**V RIGHTS AND RESPONSIBILITIES OF THE CHAMBER'S MEMBERS**

20. Պալատի անդամն իրավունք ունի՝

- 1) ընտրել և ընտրվել Պալատի կառավարման մարմիններում,
- 2) ներկա գտնվել Ժողովին կամ կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,
- 3) Տնօրենների խորհրդի կողմից սահմանված դեպքերում և կարգով օգտվել Պալատի ծառայություններից,

20. Chamber's Member shall have the right to:

- 1) elect and be elected in the management bodies of the Chamber;
- 2) be present at the General Meeting (hereinafter referred to as “the Meeting”) or any other meetings of the governing bodies;
- 3) benefit from Chamber's services set

- 4) ծանոթանալ Պալատի մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
- 5) դատական կարգով բողոքարկել Պալատի մարմինների որոշումները,
- 6) Պալատից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Պալատի կանոնադրության փոփոխությունների, Պալատի մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,
- 7) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

- forth by Board of Directors;
- 4) get familiar with the records of the Chamber's management bodies, receive the copies of their decisions;
  - 5) appeal the decisions of the Chamber's management bodies by the judicial procedure;
  - 6) request information from the Chamber, receive copies of the documents concerning the amendments to the Charter of the Chamber, minutes of the Chamber's management bodies, decisions, funds received from the property management, as well as get the copy of the independent auditor's opinion on the financial statements of the last three years;
  - 7) exercise other rights prescribed by law.

21. Պալատի անդամը պարտավոր է՝

- 1) կատարել Պալատի կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
- 2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
- 3) վճարել սահմանված անդամավճարը:

21. The Chamber's Member shall be obliged to:

- 1) fulfil the requirements of the Charter of the Chamber and execute the decisions of the management bodies;
- 2) perform the duties assigned to him/her by the decision of the management bodies in good faith;
- 3) pay the Membership fee.

22. Պալատի կանոնադրական պահանջները խախտելու կամ Պալատի կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Պալատի անդամի նկատմամբ Պալատի Տնօրենների Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Պալատի անդամությունից հեռացնելու ձևով:

22. In case of breach of the requirements set forth in the Chamber's Charter or failure to fulfil his/her obligations delegated to him/her by the decision of the Chamber's management bodies, the Chamber's Board of Directors may impose disciplinary penalties on the Chamber's Member by issuing a warning notice or dismissing from the Chamber.



## VI ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

23. Պալատի կառավարման մարմիններն են Անդամների Ընդհանուր Ժողովը /այսուհետ՝ Ժողով/, Պալատի Տնօրենների Խորհուրդը /այսուհետ նաև՝ Տնօրենների Խորհուրդ/, Տնօրենների Խորհրդի Նախագահը և գործադիր մարմինը՝ Գործադիր Տնօրենը:
24. Պալատի գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Պալատի բարձրագույն մարմնին՝ Ժողովին, իսկ վերջինիս գումարման միջև ընկած ժամանակահատվածում՝ Տնօրենների Խորհրդին՝ բացառությամբ սույն կանոնադրության 28-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 9-րդ և 10-րդ կետերով սահմանված հարցերի:
25. Պալատի հերթական Ժողովը գումարվում է 2 տարին մեկ անգամ՝ տվյալ տարվա նոյեմբեր ամսվա ընթացքում: Կազմակերպության հերթական Ժողովը հրավիրում է Գործադիր Տնօրենը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր Տնօրենը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 10 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Պալատի անդամներին:
26. Պալատի արտահերթ Ժողովը հրավիրվում է Գործադիր Տնօրենի, Տնօրենների Խորհրդի կամ Պալատի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Գործադիր Տնօրենի կողմից:
27. Պալատի արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողովը գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի

## VI MANAGEMENT BODIES OF THE CHAMBER AND PROCEDURE

23. The management bodies of the Chamber are the Meeting, the Chamber's Board of Directors (hereinafter referred to as Board of Directors), the President of the Board of Directors and the Executive Body represented by the Executive Director.
24. The right to make a final decision on any matter relating to the Chamber's activity belongs to the highest body of the Chamber -that is the Meeting, and the Board of Directors until the Meeting is convened with the exception of this Charter's 28.1, 28.2, 28.4, 28.9, 28.10 articles.
25. The Meeting of the Chamber shall be convened every two year in November of the given year. The Meeting of the Organization shall be convened by the Executive Director in the form of a joint meeting of the Members, or remotely, by means of telecommunications. The Executive Director shall decide on the date, time and venue of the meeting, as well as the draft agenda of the meeting, and notify the Members of the Chamber thereon no later than ten days before by registered mail or electronically, or through mass media or other means provided for by law.
26. The Extraordinary General Meeting of the Chamber shall be convened by the Executive Director, President, Board of Directors or at the initiative of at least one-third of the Members of the Chamber by the Executive Director.
27. The Extraordinary Meeting of the Chamber shall be convened no later than within 5 days of the aforementioned initiative. The Meeting participants shall be notified of the time and venue of the Extraordinary Meeting at least 5 days prior to the date of

մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

28. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- 1) Պալատի կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
- 2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Պալատի մասնակցության մասին որոշման ընդունումը,
- 3) Պալատի առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,
- 4) Պալատի կառուցվածքի հաստատումը,
- 5) Պալատի Տնօրենների Խորհրդի, վերջինիս Նախագահի, առաջին փոխնախագահի, երկրորդ փոխնախագահի/գանձապետի ընտրությունը և փոփոխումը,
- 6) Տնօրենների Խորհրդի Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
- 7) Պալատի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,
- 8) Պալատի կառավարման մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և սույն Կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
- 9) Պալատի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
- 10) Պալատի լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,
- 11) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

29. Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է օրենքին և սույն Կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Պալատի բոլոր

the Meeting.

28. The exclusive jurisdictions of the Meeting shall include:

- 1) approval of amendments, supplements to the Charter of the Chamber, or approval of the new restated Charter;
- 2) adoption of a decision on the establishment of another legal entity or participation of the Chamber in another organization;
- 3) adoption of decisions on the establishment of separate subdivisions or institutions of the Chamber and approval of their charters;
- 4) approval of the Chamber's Organization's structure;
- 5) election and replacement of the Chamber's Board of Directors, its President, First Vice-President, Second Vice-President/Treasurer;
- 6) determination of the procedure and terms of remuneration of the President of the Board of Directors;
- 7) approval of annual reports on the Chamber's activities and use of assets;
- 8) termination of decisions of Chamber's management bodies that contradicts the requirements of legal acts and this Charter;
- 9) adoption of the Chamber's decision on restructuring;
- 10) adoption of a decision on the liquidation of the Chamber (except for the cases of liquidation by court decision);
- 11) other powers envisaged by law.

29. The Meeting shall have quorum if it is

անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովը նախագահում է Տնօրենների Խորհրդի Նախագահը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

30. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ որոշումների ընդունման համար այլ բան սահմանված չէ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են Ժողովի նախագահողը և քարտուղարը:
31. Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:
32. Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Պալատի կառավարման ընթացիկ մարմինը Տնօրենների Խորհուրդն է:
33. Տնօրենների Խորհուրդը կազմված է 12 անդամից, որոնք ընտրվում են Ժողովի կողմից 2 տարի ժամկետով: Նույն անձը կարող է Տնօրենների Խորհրդի անդամ ընտրվել առանց որևէ սահմանափակման:
34. Տնօրենների Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Ժողովի կողմից, եթե.
  - 1) դադարել է այն անդամի անդամությունը Պալատում որից առաջադրվել է Տնօրենների Խորհրդի տվյալ անդամը.
  - 2) լրանում է իր պաշտոնավարման ժամկետը.
  - 3) վերջինս առանց որևէ հիմնավոր պատճառի մեկ տարվա մեջ վեց կամ ավելի անգամ բացակայում է Տնօրենների Խորհրդի նիստերից:
35. Տնօրենների Խորհրդի Նախագահը, առաջին փոխնախագահը և երկրորդ փոխնախագահ/գանձապետն ընտրվում են Ժողովի կողմից 2 տարի ժամկետով, ընդ որում Տնօրենների Խորհրդի Նախագահ կամ առաջին փոխնախագահ պետք է լինի ՀՀ-ում ամերիկյան ներդրումով ընկերության ներկայացուցիչ: Մինչև Տնօրենների Խորհրդի անդամների ընտրությունը Ժողովն իրականացնում է Տնօրենների Խորհրդի

convened in accordance with the law and this Charter and is attended by more than half of the total number of the Chamber's Members. The Meeting shall be chaired by the President of the Board of Directors or his/her authorized person.

30. The decisions of the Meeting shall be adopted by a simple majority of the Members attending the Meeting, unless otherwise envisaged for adopting decisions by the acting legislation of the Republic of Armenia. The minutes of the Meeting are signed by the President and Secretary of the Meeting.
31. The minutes of the Meeting shall be kept for five years.
32. In the period between the Meetings, the current management body of the Chamber shall be the Board of Directors.
33. The Board of Directors shall consist of 12 Members which are elected by the Meeting for two-year term. The same person may be elected to the Board of Directors without any limitation.
34. Powers of a Member of the Board of Directors may be terminated early by the Meeting if:
  - 1) the Membership of the Member to the Chamber from which the Member of the Board of Directors has been nominated is terminated;
  - 2) his/her term of office expires;
  - 3) the latter is absent from the meetings of the Board of Directors six or more times in one year without any justifiable reason.
35. The President of the Board of Directors, the First Vice-President and the Second Vice-President/Treasurer shall be elected by the Meeting for two-year term, furthermore, the President of the Board of Directors or the First Vice-President shall be a representative of a company with American investment in the Republic of

Նախագահի, առաջին փոխնախագահի և երկրորդ փոխնախագահ/գանձապետի ընտրություն, որոնք ընտրման փաստով դառնում են նաև Տնօրենների Խորհրդի անդամ: Այս ընտրություններից հետո իրականացվում է Տնօրենների Խորհրդի մնացած անդամների ընտրությունը:

36. Տնօրենների Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Տնօրենների Խորհրդի նիստերը հրավիրվում են Տնօրենների Խորհրդի Նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում առաջին փոխնախագահի, ինչպես նաև Գործադիր Տնօրենի նախաձեռնությամբ՝ այդ մասին 5 օր առաջ ծանուցելով Տնօրենների Խորհրդի անդամներին:
37. Տնօրենների Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Տնօրենների Խորհրդի անդամների կեսից ավելին:
38. Տնօրենների Խորհրդի նիստերին առանց քվեարկելու իրավունքի մասնակցում են Գործադիր Տնօրենը և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչը:
39. Տնօրենների Խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգն ընդունվում է Ժողովի կողմից:
40. Տնօրենների Խորհուրդը որոշումներ է ընդունում այն բոլոր հարցերով, որոնք չեն վերապահված Պալատի կառավարման մյուս մարմիններին, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ սահմանված հարցերով: Որոշումները ընդունվում են Տնօրենների Խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ:
41. Տնօրենների Խորհուրդը մասնավորապես.

- 1) նշանակում և աշխատանքից ազատում է Գործադիր Տնօրենին, սահմանում է վերջինիս վարձատրության կարգը և պայմանները,
- 2) Հաստատում է Պալատի գործունեության տարեկան հաշվետվությունները,
- 3) ժողովի հաստատման է ներկայացնում Պալատի աուդիտ իրականացնող անձին,

Armenia. Before the election of the Members of the Board of Directors, the Meeting carries out the election of the President, First Vice-President and the Second Vice-President/ Treasurer, who are also elected as Members of the Board of Directors. Following these elections, the election of the remaining 9 Members of the Board of Directors is carried out.

36. The meetings of the Board of Directors shall be held at least once a quarter. The meetings of the Board of Directors shall be convened by the President of the Board of Directors, or in case of the latter's absence, by the initiative of the First Vice-President and the Executive Director, by notifying the Members of the Board of Directors thereon at least five days prior to the Meeting.
37. The Board of Directors' Meeting shall have a quorum if it is attended by more than half of the Members of the Board of Directors.
38. The Executive Director and the representative of the US Embassy in Armenia shall attend the meetings of the Board of Directors as non-voting Members.
39. The procedure of the holding meetings of Board of Directors shall be approved by the Meeting.
40. The Board of Directors shall decide on all matters which are not reserved to other bodies of the Chamber, including all matters provided in this Charter. The decisions shall be made by the majority of the votes of all Members of the Board of Directors.
41. The Board of Directors particularly shall:
  - 1) appoint or dismiss the Executive Director, determine the reimbursement terms of the latter;
  - 2) approve the annual reports on Chamber's activities;
  - 3) nominate the Auditor of the Chamber

- 4) Հաստատում և վերահսկում է Պալատի կողմից հովանավորած ծրագրերի իրականացումը,
- 5) Հաստատում է տարեկան անդամավճարների չափը և գանձման կարգը,
- 6) Հաստատում և ստուգում է տարեկան բյուջետային ծախսերը և դրանց կատարումը,
- 7) Պալատին կից ձևավորում է կոմիտեներ՝ հատուկ ծրագրերի իրականացման նպատակով,
- 8) ընդունում և հեռացնում է Պալատի անդամությունից,
- 9) որոշումներ է կայացնում բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք վերապահված չեն Պալատի կառավարման այլ մարմիններին:

42. Տնօրենների Խորհրդի Նախագահը ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամկետով և ի պաշտոնե հանդիսանում է Պալատի Նախագահ և Գործադիր մարմնից բացի՝ Պալատն առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձը:  
Տնօրենների Խորհրդի Նախագահը.

- 1) համակարգում է Տնօրենների Խորհրդի գործունեությունը.
- 2) վերահսկում է Պալատի գործունեությունը ու պաշտպանում շահերը, իսկ արտաքին հարաբերությունների ժամանակ՝ ներկայացնում Պալատը.
- 3) ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:
- 4) նախագահում է Տնօրենների Խորհրդի և Պալատի բոլոր Ժողովների անցկացումը.
- 5) Տնօրենների Խորհրդի համաձայնությամբ նշանակում է Պալատի կոմիտեների նախագահներին.
- 6) կնքում է աշխատանքային պայմանագիր Գործադիր Տնօրենի հետ:

43. Առաջին Փոխնախագահը, Նախագահի

to the approval by the General Meeting;

- 4) approve and exercise supervision over the implementation of the programs sponsored by the Chamber;
- 5) approve annual Membership fees and the charging order;
- 6) approve and review the annual budget expenditures and their execution;
- 7) establish Committees adjunct to the Chamber for implementing specific programs;
- 8) approve or terminate the Chamber's Membership;
- 9) make decisions on all matters not reserved to other bodies of the Chamber.

42. The President of the Board of the Directors is elected by the Meeting for two-year term and is the *ex-officio* President of the Chamber and along with the Executive Director is authorized to represent the Chamber and shall:

- 1) coordinate the activities of the Board of Directors;
- 2) exercise supervision over the activities and interests of the Chamber and represent the Chamber in external relations;
- 3) Represent the Chamber in RA and foreign countries;
- 4) chair at all meetings of the Board of Directors and the Chamber;
- 5) appoint Chairpersons of Committees of the Chamber with the approval of the Board of Directors;
- 6) conclude an employment contract with the Executive Director.

43. When the President is absent, the First

բացակայության ժամանակ իրականացնում է վերջինիս պարտականությունները:

44. Երկրորդ փոխնախագահ/գանձապետը վերահսկում է Պալատի ֆինանսական գործարքները, ինչպես նաև կազմում է տարեկան եկամուտների և ծախսերի բյուջեն, իսկ յուրաքանչյուր եռամսյակի վերջում Տնօրենների Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն:
45. Գործադիր Տնօրենն նշանակվում է Տնօրենների Խորհրդի կողմից 2 տարի ժամկետով և հանդիսանում է Պալատի գործադիր մարմինը:
46. Գործադիր Տնօրենը ղեկավարում է Պալատի ընթացիկ գործունեությունը և Պալատի Կանոնադրության, Ժողովի և Տնօրենների Խորհրդի որոշումներին համապատասխան.

- 1) ապահովում է Ժողովի և Տնօրենների խորհրդի որոշումների կատարումը,
- 2) տնօրինում և կառավարում է Պալատի ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Պալատի անունից,
- 3) ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 4) տալիս է լիազորագրեր,
- 5) բանկերում բացում է Պալատի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,
- 6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 7) Տնօրենների Խորհրդի համաձայնությամբ հաստատում է Պալատի աշխատակազմի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
- 8) Տնօրենների Խորհրդի համաձայնությամբ հաստատում է Պալատի գործունեությունը

Vice-President shall perform the latter's duties.

44. The Second Vice-President/Treasurer shall control the financial operations of the Chamber, as well as prepare an annual revenue and expenditures budget, and at the end of every quarter shall submit financial reports to the approval of the Board of Directors.
45. The Executive Director shall be selected by the Board of Directors for two-year term and shall be the executive body of the Chamber.
46. The Executive Director shall manage daily activities of the Chamber and, in accordance with the Charter of the Chamber, the decisions of the Meeting and the Board of Directors, shall:

- 1) ensure the implementation of decisions by the Meeting and Board of Directors;
- 2) manage and administer the Chamber's assets of any type and size, including financial means, conclude transactions on behalf of the Chamber;
- 3) represent the Chamber in the Republic of Armenia and in foreign countries;
- 4) grant powers of attorney;
- 5) open a settlement (including foreign currency) and other bank accounts;
- 6) issue orders, commands within his/her competence, give binding instructions for execution, and exercise supervision over the implementation;
- 7) approve the reimbursement terms of the Chamber employees and annual expenditure estimate upon the approval of the Board of Directors;
- 8) approve the internal documents regulating the Chamber's activities, including separate units, internal

կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

- 9) հաստատում է Պալատի, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները՝ Տնօրենների Խորհրդին և Ժողովին ներկայացնելու նպատակով,
- 10) հաստատում է և Տնօրենների Խորհրդին և Ժողովին է ներկայացնում Ժողովների գումարմանը նախորդող տարիների Պալատի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
- 11) Տնօրենների Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Պալատի անդամության թեկնածուներին և առաջարկում հեռացնել անդամությունից,
- 12) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

## **VII ՊԱԼԱՏԻ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

47. Պալատը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
48. Պալատը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:
49. Պալատի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
  - 1) Պալատի անդամների անդամավճարները և ներդրումները,
  - 2) Պալատի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

disciplinary and other rules upon the agreement of the Board of Directors;

- 9) approve the reports of the Chamber, as well as its bodies for submission to the Meeting or the Board of Directors;
- 10) submit to the approval of the Meeting and the Board of Directors annual reports on the Chamber's assets use and the Chamber's activities of the years preceding the meetings;
- 11) nominate for the Membership of the Chamber for approval by the Board of Directors and suggest to terminate the Membership;
- 12) exercise other powers prescribed by this Charter and the legislation of the Republic of Armenia.

## **VII ASSETS OF THE CHAMBER, SOURCES OF THEIR FORMATION AND THE PROCEDURE OF THEIR USE**

47. The Chamber shall hold separated assets as its ownership and shall be held liable for its obligations with those assets.
48. The Chamber may have both movable and immovable property as its ownership – buildings, constructions, vehicles, equipment, funds, securities and other assets not prohibited by law.
49. A source of formation of the assets of the Chamber may include:
  - (1) Membership fees and investments by the Chamber's Member;
  - (2) Funds from the entrepreneurial activities of the Chamber;
  - (3) Funds from other commercial organization, which the Chamber established or holds share therein;
  - (4) Grants or donations supporting the

- 3) Պալատի ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
  - 4) Պալատի նպատակներին աջակցող դրամաշնորհները կամ նվիրատվությունները.
  - 5) Հանգանակությունները.
  - 6) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ:
50. Պալատի միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:
  51. Պալատի գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:
  52. Տնօրենների Խորհրդի անդամի կողմից Պալատի գործունեության համար կամ կապակցությամբ իրականացված ծախսերն ենթակա են փոխհատուցման:

**VIII ՊԱԼԱՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,  
ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊԶՈՒՄ ԳՈՒՅՔԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

53. Պալատը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:
54. Պալատը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:
55. Պալատի լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Պալատի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:
56. Պալատը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 26.11.2018թ.

- objectives of the Chamber;
- (5) Donations;
  - (6) Other funds not prohibited by the legislation of the Republic of Armenia.

50. The funds of the Chamber may be used to fulfil the objectives and tasks defined by the Charter.
51. The assets of the Chamber, including the revenues from the entrepreneurial activities, may not be distributed among its Members.
52. Expenses incurred by or on behalf of the Board of Directors for the activities of the Chamber shall be subject to compensation.

**VIII RESTRUCTURING, LIQUIDATION OF  
THE CHAMBER, USE OF ASSETS IN CASE OF  
ITS LIQUIDATION**

53. The Chamber may be liquidated upon the Meeting's decision or court judgment.
54. The Chamber shall form the liquidation commission and determine the liquidation procedure and timeframes in a manner prescribed by law.
55. Upon the completion of the liquidation procedure, the Liquidation Commission shall use all the assets left after paying all its outstanding liabilities in accordance with the legislation to the fulfilment of the objectives and tasks of the Chamber, and in case of its being found to be impossible, shall transfer them to the State Budget.
56. The Chamber may be restructured upon the Meeting's decision or by a court judgment in cases provided for by law in a manner prescribed by law.

This Charter is composed on 26. 11. 2018